



Երևան
 Յուր Բերրի,
 Վազգէնի զար
 Վարդանիսի
 Բայրի Կառու
 Բն Վրացի
 Վրացի զար
 Բայր Վրաց
 Վրաց Վրաց



ԱՅՈՑ ԼԵԶՈՒ
 ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. 2016



Վրացի զար
 Վրացի զար
 Վրացի զար
 Վրացի զար
 Վրացի զար

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

2016, թիվ 1 (108)

Ղջա համախումբ

Օգնություն ուսուցչին

Դավիթ Գասպարյան	Հայոց ցեղասպանության գեղարվեստական անդրադարձը Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ	3
Գայանե Գրիգորյան	Հնչերանգը.....	11

Մեթոդիկա

Անահիտ Մուրադյան	Հերիաթի ուսուցումը.....	16
Լիանա Խալաթյան	Փոխներգործուն մեթոդներ.....	19
Լուսինե Ավագյան		
Նելլի Թադևոսյան	Նոր տեխնոլոգիաներ, նոր սերունդ.....	21

Ուսուցչի ամբիոն

Հովիկ Գրիգորյան	Գրական հայերենի ուսուցման առանձնահատկությունները	24
Արևհատ Մարտիրոսյան		

Անդրադարձներ

Քանի՞ անգամ պետք է քանդել Չվարթնոցը.....		32
Շատերը պարզապես «հայրենասեր» են աշխատում.....		33
Սա Տեռյան չէ, սա խեղճուկրակություն է		33
Ի գեն, ի վրեժ.....		34
Ախր ո՞ր ես գնում, շա՛ն տղա		36
Համո Սահյան ասա, նստիր ու լաց եղիր.....		37
Մի «Փակ դռների գաղտնիք» էլ այս գիրքն է.....		39

Ժամանակներ և դեմքեր

Ռազմիկ Մարկոսյան	Նրանց այլընտրանքային հայրենիքը.....	41
------------------	-------------------------------------	----

Ժամանակակից գրականություն

Ռազմիկ Դավոսյան	Բանաստեղծություններ.....	45
-----------------	--------------------------	----

Գրքեր ձեզ համար

Դավիթ Գասպարյան	Կյանք և ճակատագիր.....	51
Կարինե Գասպարյան	Ինքնության գումարեղիները.....	62
Դավիթ Ավետիսյան	Կետադրական նշաններ.....	64

ՀՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիտամեթոդական հանդես
Լույս է տեսնում 2000 թվականից
Տարեկան՝ վեց համար
2016, թիվ 1 (108)

ԳԼԽԱԿՈՐ ԽՄԲԱԳԻՐ

ՂԱԿԻԹ ԳԱՄՊԱՐՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հովիկ Ալեքսանյան, Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Ռազմիկ Դավիդյան, բանաստեղծ
Հրաչյա Թամրազյան, ԳԱԱ թղթակից անդամ, Մատենադարանի տնօրեն
Գուրգեն Խաչատրյան, գիտության դոկտոր, ՎՊՄՀ ղեկավար
Սերգո Հայրապետյան, գիտության դոկտոր, ԳԱԱ Շիրակի ՀՀԿ տնօրեն
Լավրենտի Հովհաննիսյան, ԳԱԱ թղթակից անդամ
Սամվել Մուրադյան, գիտության դոկտոր, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ
Հակոբ Մովսես, բանաստեղծ, թարգմանիչ
Արտեմ Սարգսյան, ԳԱԱ թղթակից անդամ
Սոնա Վան, բանաստեղծ, «Նարցիս» ամսագրի հիմնադիր (ԱՄՆ, Լոս Անջելես)

Համակարգչային աշխատանքները

ՄԱՐԻԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Հանձնված է տպագրության 03. 06. 2016:

Ծավալը՝ 4 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 1500:

Չափսը՝ 70x100 ¹/₁₆:

Գրանցման վկայական՝ 1003:

Հասցե՝ Տիգրան Մեծի 67, 313 սենյակ: Հեռ. (010) 574.820, բջջ. (096) 501.743:

Էլ. փոստ՝ mariam.petrosyan@gmail.com: Ավելացնել՝ ՀԼԳ-ի համար:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Hayots Lezu yev Grakanutyun» («Armenian Language and Literature»)
Scientific and Methodological Journal.

375111, 67, Tigran Metsi Yerevan, Armenia. Phone 574. 820, (096) 501.743. Printed 1500
samples.

*Խմբագրությունը ներկայացված նյութերը գրախոսվում են: Արտատպության դեպքում հղում
հանդեսին պարտադիր է:
Դպրոցներին մեկ օրինակ առաքվում է անվճար, որը պետք է պարտադիր գրանցվի դպրոցա-
կան գրադարաններում:*

ՎԱՃԱՍԹԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ:



ՓՈՒՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐ

ԼԻԱՆԱ ԽԱԼԱԹՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ԵՊՀ անգլերենի առաջին ամբիոն

Ժամանակակից տեղեկատվական քաղաքակրթության դարաշրջանում անհրաժեշտ է աշխատել այնպիսի պայմաններում, երբ գիտելիքներն արագ են հնանում, քան հասցնում են յուրացվել սովորողի կողմից, այդ պատճառով ստեղծագործ անհատի պատրաստման համար անհրաժեշտ են ուսուցման նոր մեթոդներ և ձևեր, որն ի վիճակի կլինի անընդհատ զարգանալ և ինքնակատարելագործվել: Ուսուցչի նպատակը սովորողի անհատական գործունեության զարգացումն է, մարդուն այնպես դաստիարակելը, որ համապատասխանի ժամանակակից պահանջներին: Այդ պատճառով էլ ուսումն այնպես պետք է կազմակերպել, որ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա զարգանալ և բացահայտվել որպես ստեղծագործ անհատ: Այս ամենը պահանջում է ժամանակակից մոտեցում ուսումնական գործունեության կազմակերպմանը, աշխատանքի նոր ձևերի և մեթոդների որոնմանը: Կխոսենք ուսուցման փոխներգործուն մեթոդների մասին, երբ աշակերտը, ուսանողն ունեն ընտրության հնարավորություն և կարող են օգտագործել սեփական նախաձեռնությունը:

Խոսքային միջավայրի կազմակերպման ձևերն ու մեթոդները տարբեր են: Տարրական դպրոցում դասերի ժամանակ նպատակահարմար է կիրառել խաղային-փոխներգործուն մեթոդը՝ առաջնային դարձնելով խաղային գործունեությունը: Երեխաներին հետաքրքիր են խաղ-մրցույթները, դերային խաղերը, հաճույքով մմանակում են խոսքային մմուշները, կրկնում են հնչերանգը, որով ուսուցիչն արտասանում է դրանք, սիրում են մասնակցել խմբային աշխատանքին: Ուսուցչը յուրաքանչյուր դասը պետք է դարձնի հետաքրքիր, գրավիչ, որպեսզի զարգացնի ճանաչողական հետաքրքրությունը, սովորողներին դրոյի գործուն մասնակցության:

Կարևոր տեղ է զբաղեցնում նախագծային գործունեությունը: Նախագծերի մեթոդը թույլ է տալիս զարգացնել սովորողների հաղորդակցական իրազեկությունը: Նախագծային աշխատանքները սիրված են և՛ սովորողների, և՛ ուսանողների կողմից: Գործ ենք ունենում խառը նախագծերի հետ, որոնցում միաժամանակ առկա են հետազոտական և ստեղծագործական տարրեր:

Նախագծի հիմքում ընկած է ինչ-որ խնդիր, այն լուծելու համար սովորողներից պահանջվում է ոչ միայն լեզվի իմացություն, այլև տարբեր առարկայական գիտելիքների տիրապետում, որոնք անհրաժեշտ և բավարար են տվյալ աշխատանքի կատարման համար: Բացի այդ, ուսանողները պետք է որոշակի ստեղծագործական և հաղորդակցական կարողություններ ունենան: Նախագծային աշխատանքով ձևավորվում, կատարելագործվում և զարգանում են լսելու, գրելու, կարդալու և խոսելու հմտությունները: Նախագծային աշխատանքի ընթացքում ուսանողները ձեռք են բերում միջնակության շփման հմտություններ:

Խաղային մեթոդի դեպքում դասին ներգրավվում են խմբի բոլոր անդամները: Դասախոսը նախապես տալիս է տեղեկատվության մի մասը և սովորողներին հնա-

րավորություն տալիս ինքնուրույն ձեռք բերելու շարունակությունը: Ուսանողը պետք է ուսումնասիրի բուն նյութը, ավելացնի իր սեփական կարծիքը, կարողանա քննադատել այն խմբի մյուս մասնակիցների հետ և պաշտպանել իր տեսակետը: Նա կարող է կից ներկայացնել տարբեր նյութեր, փաստաթղթեր և նկարներ: Արդյունքում ձեռք է բերում ոչ միայն գիտելիք այլև հնարավորություն՝ ունենալու սեփական կարծիք պայքարելու մրցակցության ժամանակ: Դասավանդողը տվյալ դեպքում պետք է սկզբում տա տեղեկատվությունը, այնպես ձևակերպի հարցը, որ հնարավորություն տա ուսանողներին դասի ժամանակ ճիշտ ներկայացնելու նյութը՝ նախաբանով եզրափակող նշումներով: Նա նաև պետք է կազմակերպի քննարկումը և ընթացքում օգնի ուսանողներին ճիշտ ձևակերպելու իրենց մտքերը: Խմբային աշխատանքում դեպքում բոլորին հնարավորություն է տրվում կիրառելու իրենց ստացած գիտելիքները, ինչպես նաև աշխատելու խմբի ներսում և ընտրելու ղեկավար: Հատուկ ուշադրության են արժանի համակարգչային ներկայացումները (շնորհանդես):

Համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը միանգամից մի քանի խնդիր լուծում՝ սովորում են ինքնուրույն տեղեկություններ հավաքել, ստեղծագործաբար կիրառել ձեռք բերված գիտելիքները, ձեռք են բերում շփման փորձ և խմբով աշխատելու հմտություն: Համակարգչային շնորհանդեսները պարզապես անփոխարինելի են երկրագիտական նյութի ներկայացման ժամանակ: Շնորհանդեսի օգնությամբ կարելի է ակնհայտորեն, հետաքրքիր և մատչելի ներկայացնել ուսումնասիրված լեզվի երկիրը, նրա աշխարհագրությունը, պատմությունը, ժողովրդի առօրյա կյանքը: Յուրաքանչյուր ուսանողի համար շնորհանդեսն ինքնարտահայտման եղանակ է, նաև միջոց՝ ցույց տալու իրեն, իր հետաքրքրությունները, ձեռք բերած հմտությունները: Կարևոր է ստեղծել շնորհանդեսների տարբեր տեսակներ: Շնորհանդեսները պարունակում են քերականության բաժնի հարցեր, առաջադրանքներ քերականական կառույցների յուրացման համար: Տեղեկատվական-հետազոտական շնորհանդեսների ստեղծման աշխատանքն առանց բացառության բոլորին է դրսև գալիս: Օրինակ, ինչպես գրել «Նամակ» շնորհանդեսը ծանոթացնում է անհատական նամակ գրելու կանոններին: Պատկերավոր շնորհանդեսները կիրառվում են ուսումնական նյութի պատկերավորման համար: Շնորհանդեսը կարող է ցանկացած ձև ունենալ, 3-4 բույսանոց զեկույց լինել սայիկների ցուցադրության ուղեկցությամբ, այնուհետև ներկայացնողը պետք է պատասխանի հարցերին: Ինքնաազդարար Վերլուծության փուլում գնահատվում է խմբի յուրաքանչյուր մասնակցի աշխատանքը: Քննարկումը բանավեճի տեսքով է ընթանում: Ուսանողները հարցեր են տալիս և պատասխանում դրանց, ցույց են տալիս ներկայացված շնորհանդեսների ուժեղ և թույլ կողմերը, վերջնական եզրահանգման են գալիս:

Փոխներգործում ուսուցման այլ ձևերից է բանավեճի մեթոդը, որ ենթադրում է որոշակի հիմնահարցերի վերաբերյալ հայացքների, կարծիքների փոխանակում քննարկում: Բանավեճի մեթոդն իրականացնում է ուսուցման գործընթացի բոլոր գործառույթները: Այս մեթոդը օգտագործվում է, երբ նպատակ է դրվում ձևավորել մտքի գիտելիքներ, ուսումնառողներին սովորեցնել հասկանալ փաստարկների և դրանց վրա հիմնված եզրահանգումների միջև տարբերությունները, ձևավորել հարողորակցական հմտություններ, օգնել սեփական կարծիքն ամրապնդելու և պատասխանելու հարցում: Բանավեճը կարող է լինել ազատ, երբ զարգանում է ազատ, և դե-

կավորվող, երբ զարգանում է որոշակի ուղղությամբ: Կռահման մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ ուսանողներին հաղորդվող բուն նյութը հայտնի չէ, սակայն օգտագործելով նրանց գիտելիքների պաշարը, տրամաբանական մտածողությունը, դասախոսը փորձում է ջանքերի շնորհիվ բացահայտել, պարզաբանել նյութը: Որպես հնար հուշման միջոցով թվարկվում են անհայտ առարկայի հատկանիշերը: **Փոխադարձ դասավանդման** մեթոդը կիրառվում է, երբ սովորողները զույգ առ զույգ, փոխադարձաբար միմյանց նկատմամբ ստանձնում են ուսուցչի դեր: Մեթոդն արդյունավետ է, երբ հաշվի են առնվում դասավանդվող նյութի առանձնահատկությունները, բարդությունը, ինչպես նաև սովորողների տարիքային, անհատական, սեռային առանձնահատկությունները: **Փինբորտ տեխնիկայի** մեթոդը (անգլերեն՝ ամրացնել և board գրատախտակ բառերից) ուսուցման տեխնիկա է, որի էությունը բանավեճի կամ ուսումնական գրույցի համադրությունն է գործնական մեթոդի հետ: Փինբորտ տեխնիկայի մեթոդը իրականացնում է ուսուցման գործընթացի բոլոր գործառնությունները, բայց հիմնականում՝ զարգացնող և դաստիարակող գործառնություն՝ ուսումնառողների մոտ ձևավորում է շփման, բանավեճի մասնակցության մշակույթ, սեփական մտքերը ոչ միայն բանավոր, այլև գրավոր արտահայտելու կարողություն, տրամաբանական և համակարգային մտածողության հմտություն:

Վերլուծելով օտար լեզուների ուսուցման ժամանակ դասի փոխներգործում ձևերի կիրառմանն ուղղված ներկայացված փորձը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ տեղեկատվական-համակարգչային տեխնոլոգիաների և նախագծային մեթոդաբանության կիրառումը հարստացնում է ոչ միայն ուսանողին, այլև ուսուցչին, խթանում է որոնումը, նախաձեռնությունը, ստիպում է նրան ժամանակին համընթաց քայլել:



ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ

ՆԵԼԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Երևանի Աղասի Խանջյանի անվան թիվ 53 հիմնական դպրոց

Արդի տեղեկատվության բազմազանությունն ու ծավալն ակնհայտ են դարձնում, որ դպրոցը՝ մանկավարժը, աշակերտը և ծնողը կանգնած են գիտելիքի ահռելի պաշարների առջև, որոնց յուրացումը գրեթե անհնարին է: Պետք է ճշգրտվի՝ արդյո՞ք մենք նպատակ ունենք աշակերտին սովորեցնել ամեն ինչ: Այդ պատճառով ուսուցիչը, ծնողը պետք է տեղյակ լինեն երեխայի հետաքրքրությունների շրջանակին և աղբյուրներին: Ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները դուրս են եկել մշտական, կայուն հսկողությունից, ուստի երեխան հաճախ ձեռք է բերում իր տարիքին չհամապատասխանող տեղեկատվություն, ինչից էլ բխում են բազմաթիվ խնդիրներ:

Վերջին տարիներին տեխնոլոգիական նոր միջոցների կիրառումը լուրջ հիմնախնդրի առջև կանգնեցրեց հասարակությանը: Հեշտ հասանելի համացանցա-